24րդ ՏԱՐԻ ԹԻՒ 6622 — 18 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1907 — ՀԻՆԳՇԱԲԹԻ — 24 ՌԱՄԱԶԱՆ 1325 — 31 Octobre 1907 — 24me année № 6622

«ԱՐԵՒԵԼՔ»
ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
ԳԱՐԵԳԻՆ ՊՕՅԱՃԵԱՆ
Կ. ՊՈԼԻՍ, ՂԱԼԱԹԻԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՄԱՐ ՏԱՐԵԿԱՆ 80 Ղ.ռ.
» » ՎԵՑԱՄՍԵԱՅ 45 »
ԳԱՒԱՌՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ ՏԱՐԵԿԱՆ 108 »
» ՎԵՑԱՄՍԵԱՅ 60 »
ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ ՏԱՐԵԿԱՆ 25 Ֆրք.
» » ՎԵՑԱՄՍԵԱՅ 20 »
ԹՂԹԱՏԱՐԻ ԾԱԽՔԸ ՄԵՐ ՎՐԱՅ

# ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

10 ՓԱՐԱ — 10 PARAS

آره ولك
ارمنيجه يومى و سياسى غزته
صاحب امتيازى قره كين بوياجيان
درعليه غلطه

"ARÉVELK"
JOURNAL ARMÉNIEN
Directeur-Propriétaire
KARÉKIN BOYADJIAN
Cons|ple, Galata

## ԿՐՕՆԱ-ՊԱՏՄԱԿԱՆ

### ԿՐՕՆԻ ԷՈՒԹԻՒՆԸ

Նախընթաց յօդուածի մը մէջ պարզեցինք կրօնի էութեան մասին մինչեւ այժմ արտայայտուած տեսութիւնները, և տեսանք որ կրօնական զգացումը համամարդկային է և քաղաքակրթութեան ամէն աստիճաններու վրայ գտնուող ազգեր ու ցեղեր կրօն ունեցեր են և ունին։ Կրօնական զգացումը «բացարձակ ենթակայութեան» զգացում անուանած է Շլայերմախեր, բայց այս ենթակայութիւնը տեղի կ՚ունենայ մեր յօժար կամքով։ Մարդիկ աստուածային պատուէրները կը կատարեն իրենց կամքի ազատ որոշմամբ։ Իրենց հոգեկան ազնիւ առանձնայատկութիւններէն և արժանապատուութենէն բան մը չեն կորսնցներ։ Ընդհակառակը, կատարեալ համոզմամբ և գիտակցութեամբ կրօնական պատուէրներ կատարողներ իրենց անձին և բնութեան մեքենական օրէնքներուն դէմ կրնան պայքարիլ կրօնաբարոյական սկզբունքներ իրագործելու համար և այս կերպով ձեռք կը բերեն բարոյական անկախ կամք, իրենց կիրքերուն գործիք չեն դառնար և մարդկութեան բնական ուժերուն դէմ կը պայքարին. այսպէս, օրինակի համար, քոլէրայի, ժանտախտի և այլ հիւանդութեանց, հեղեղի, երկրաշարժի դէմ եայլն։ Այսպիսի ներքին հոգեկան վիճակ մը ձեռք բերելու աշխատած են ամէն դարերու մեծ փիլիսոփաները։ Իւրաքանչիւր կրօն հարկաւ այս տեսակէտով իրեն հետեւողները հոգեպէս երջանկացնել կ՚ուզէ։ Կրօնի [illegible]

[illegible]

...ները ճանչնալու կը ձգտի և մեր ստացած բոլոր մտապատկերները կը կարգաւորէ ու կը դասաւորէ ճշմարտութեան հիման վրայ և ապա գործնական բանականութիւն, որ կը ձգտի մեր բոլոր ձգտումներն ու կամեցողութիւնները կանոնաւորելու բարութեան հիման վրայ։ Այս երկու ներդաշ[illegible]

[illegible]

...ձգտինք յօժարակամ և բերկրալից։

Ահա՛ այս երկու ըմբռնումները դուռնաւոր թելի մը պէս կ՚անցնին ամբողջ կրօնից պատմութեան մէջէն և կ՚ուսուցանեն որ, ինչպէս անհատական համոզումներու, նոյնպէս ալ կրօնական ըմբռնումներու նկատմամբ պէտք է ներողամիտ և համբերատար ըլլանք։

ՏՕՔԹ. Յ. ԹՕՓՃԵԱՆ

## ԵԶԻՆ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ՊԱՐՍԱՄԵԱՆԻՆ

Ծպուռը կ՚երգէ, թռչունը կը դայլայլէ, ոռնակը կը գեղգեղէ, կատուն կը մլաւէ, շունը կը հաչէ, ձին կը վրնջէ կամ կը խրխնջէ — որը որ սիրէք։ Էշը կը զռայ, կովը կը բառաչէ, առուակը կը կարկաչէ։ Բան մը չեմ ըսեր [illegible]

[illegible]

«ԱՐԵՒԵԼՔԻ» ԹԵՐԹՕՆԸ (8)

ԺԱՔ ՊՐԻԷՆ

## ԴՐԱՄ ԵՒ ՍԷՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՖՕՆ-ՔՈՒՎԷՐԹԻ ԶԱՂԱՑՔԸ

Ե.

— Անտարակոյս, պարոն. բայց մեծ բան մը չէ կատարած աշխատութիւնս։

Ալպեր հօրին չուրջը դարձաւ՝ աւելի մօտէն զննելու համար պատկերը, առանց տեղէն խախտելու եռոտանին ու մանկամարդ աղջիկը։

Մայր Ռընոյի առջեւէն անցածատեն Ալպեր ըսաւ.

— Բարեւ, մայր, Ռընօ։ Ձեր որպիսութիւնը ինչպէս է։

— Շնորհակալ եմ, պարոն Ալպեր։ Ինչպէս կը տեսնէք, միշտ միեւնոյն վիճակին մէջ կը գտնուիմ գրեթէ։

Պառաւ կինը չէր հիւսեր ալ հեւ։ Ծունկերուն վրայ դրած ձեռքերը՝ կը դիտէր, ոչ թէ իր նկարը, այլ այն գեղեցիկ պատկերը զոր կը ձեւացնէին Ալպեր ու Մարթ. գեղադէմ երիտասարդ մը որ մանկամարդ գեղուհիի մը վրայ ծռած էր։

[illegible]

(Շարունակելի)

